

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարձարկից հետո  
Տարեկան 10 Ձր.  
Վեցամսեայ 5 »  
Իրատասնմանի հա-  
մար Տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
Անկերիկայի համար  
Տարեկան 2.50 զր.  
Վեցամսեայ 1.25 »  
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուկան տղոց առարկին  
ևրենին համար 40 սանթրիմ  
և իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանթրիմ է. երեխան  
անկերիկայի անգամներու համար  
20 Օ10 զեղջ կըլլայ :

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

Նախակ և Գրամ Գրկեչ  
Խմբագրութեանն հասցեին  
—  
Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Կրթութեանն և Գրմանն Տնօրէն

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

## ՍԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Սուլթան Համիտի կարեւոր դեպանները հաւարվել են Պօլիս Միշտ ալեկի ծովեան ենթախոյ թուրք պետական նաւի զեկավար, հին և նոր նախարարները՝ մայրաքաղաք ժամանած թուրք քաղաքագէտների հետ խորհրդակցում են Փատիշահի երկրի ներկայի և ապագայի մասին : Օտար մամուլը զանազան բացատրութիւններ է տալիս այդ խորհրդակցութիւնների մասին, բայց որոշ բան չէ կարողանում ասել : Եւ իսկապէս այդ ի՞նչ ժողովներ են, ինչո՞ւ են հաւաքվել այդ արքայական ծեր միները : Արքեօ՞ք ինչ փոթորիկ է սպասում Օսմանի Ալիի պետութեան : Անշուշտ մի բան կայ :

Պետական դժար վայրկեաններ միշտ անպակաս են եղել Սուլթան Համիտի գլխից : Նրա գահը բարձրանալու օրից սկսած՝ Օսմանեան երկիրը միշտ մառախլապատ է եղել . . . Եւ բոլորովին պարզվելու յոյսը ամենեւին չը կայ :

Անկասկած է որ Սուլթանը մի փորձեալ ունի. որոշել այդ ցաւը, մասնաւորել մենք չենք կարող : Իայց մի բան մեզ համար պարզ է, այն է որ Փատիշահը որչափ էլ արտաքուստ սիգապանծ, խրոխտ և վեհափառ է ցոյց տալիս իրան, բայց ներքուստ միշտ անապահով, միշտ գողի մէջ է թէ իր գահի և թէ իր ամբողջ պետութեան համար :

Սուլթանի գահի տակը փորում են թէ հարազատ և թէ օտար դժգոհ տարերբը. փորում են թէ և թոյլ, զանգաղ, բայց անընդհատ, ու երբէք մտադիր չեն իրանց գահակործան աշխատութիւնը դադարեցնել : Այդ պեանափոր գործունէութեան խորհրդաւոր և սարսուցեցիչ զարկերը Սուլթանը միշտ լուսմ է իր ակնակաւու գահի տակից : Ցորեկ և զիշեր : Նրա բռնակալական խարաղանի տակ մղկտացող ազգի

ազգի ստրուկները վրէժ մանչալով քերում են գահի սիւները :

Օրօրվում է Համիտի գահը. մկները խորհուրդ են կազմել փլշելու առաջն առնել : Բայց զուր : Այդ գահը պէտք է փլիւայսօր, կամ վաղը, շուտ կամ ուշ, որովհետեւ հիմերը խաղտված ու խարխուլ են : Եւ ժամանակն է փլելու : շատ է արիւնոտ այդ գահը : Պատմութիւնը անողորդատու է : Նա շատ գահակալների է վարձատրել արդար կերպով, արեան տեղ արիւն առնելով :

Սուլթանը չէ կարող բացառութիւն կազմել մարդակուլ գահակալների մէջ : Պէտք է իր թափած արեան փոխարէնը լիովին հատուցանէ :

Եւ այդ սոսկալի հատուցման ժամը հնչելու վրա է :

ՎԱՐԿՈ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պօլիս, 3 Սեպտեմբեր

Հայ կեանքի բեմին այսօրուան է՛ն մեծ լարախաղացը՝ Օրմանեան, այս շարժու այնպիսի խայտառակ կատակերգութիւն մը խաղաց որ իմացողը մատը պիտի խածնէ :

Օրմանեան նկատելով որ արտասահմանէ և Պօլսէն ու գաւառներէ խիստ զանգատներ և բողոքներ կան իր ապարդիւն պաշտօնավարութեան դէմ և ամէնքը միաբերան իր հրաժարականը կը պահանջեն, անցեալ շաբաթ օրու ընէ սկսեալ տանը մէջ փակուած մնաց (արդէն շաբաթը երեք օր տունը կը մնայ) և թերթերուն ալ գրել տուաւ թէ «Ս. Պատրիարքը երէկ Պատրիարքարան շիջաւ, միւս կողմանէ իր կուսակիցները և նամանաւանդ Տէր Ներսէսեան պիակալէզը սկզբան տարաձայնել չորս կողմ թէ «Պատրիարքը հրաժարած է և յառաջիկայ չորեքշաբթի ալ խառն ժողովին պիտի մատուցանէ իր հրաժարականը և յետոյ՝ կառաւ վարութեան» : Իրաւ ալ «կարե-

ւոր և ստիպողական խնդիր մը՝ ըսելով խառն ժողովը հրաւիրեց անցեալ չորեքշաբթի օրուն 15 անգամ ներկայ գտնուեցան, բայց ամենէն զարմանալին սա եղաւ որ նոյն ինքը Պատրիարքը եկաւ նախագահեց նստին՝ որուն մէջ էր թէ իր հրաժարման խնդիրը նկատուած պիտի առնուէր :

Պատրիարքը ժողովին մէջ ո՛չ միայն իր հրաժարման մասին ու է բան մը չըսաւ և ու է երկտող մը չը ներկայացուց, հապանաւ կարեւոր և ստիպողական խնդիրը մըն ալ անունը չը տուաւ, միայն յայտարարեց թէ կայսկառավարութիւնը սկսած է նկատուածեան առնել Պատրիարքարանի պահանջները !!! : Յարութիւն փաշա ալ ոչ նուազ ճարտար կատակերգակ մը, շեշտեր է Օրմանեանի յայտարարութիւնը և աշխարհական անդամոց միաձայնութեամբ որոշուեր է գահակալութիւն յայտնել և սպասել խոստումներու դորձադրութեան :

Եկեղեցական անդամները շատ բաներ խօսեցին : պէտքերը և ցաւերը մատնանիչ ըրեր են և յաւելցուցեր են թէ հակառակ պարագաներու մէջ պէտք է որ Պատրիարքը ընէ ա՛յն ինչ որ ըրին իր նախորդները : Խեղճերը կը վախնան բացէ ի բաց «հրաժարէ» ըսելու, որովհետեւ գիտեն թէ անի պալատ պիտի գիմէ և ըսէ «եկեղեցականները զիս հրաժարելու կը ստիպեն» : Արդէն Օրմանեան ա՛յնքան զրպարտութիւններ ըրած է կրօն. ժողովի երկու ատենապետներուն մասին որ անոնք այսօր կառավարութեան կողմանէ լաւ աչքով չեն դիտուիր :

Իոլոր ասոնք գիտնալով է որ վերջին խառն ժողովին ներկայ եղող սակաւաթիւ կղերականները որոշեցին քիչ մը ժամանակ եւս համբերել և եթէ տեսնեն որ այս սպասումին վերջը չի դար, այն ատեն մտածուի թէ ի՞նչ ընելու են :

Ուրեմն հրաժարականի խնդիրը կրկին շուրջ ինկաւ : այսուհանդերձ Պատրիարքը գեւ Պատ-

րիարքարան շիջեց և ո՛ գիտե այս խաղը մինչեւ երբ պիտի տեսէ :

Պէտք է միջոց մը խորհիլ Պօլսոյ մէջ ալ յիշատակութիւնը դադարեցնելու համար, զի որքան որ ներքնապէս խլրտումներ չըլլան՝ այս մարդը ա՛յնքան ալ յաւիտենական Պատրիարքը պիտի ըլլայ :

Օրմանեանի տունը նստելը սակայն իրեններուն օգտակար եղաւ, վասն զի Պատրիարքարանի ամսական 15 ոսկի դրամովը պահուած կառքը ամէն օր Շիջիլի և Գեահըտ. Խանէէ կողմերը կերեւայ կիներով լեցուն : Ոմանք կըսեն թէ քոյրերն են և սմանք ալ . . . . .

Անոնք որ կըսեն թէ իզմիրլեանի խիստ ընթացքովը ազգին գործերը ձախողանքի մատնուցան, այսօր Օրմանեանը աչքերնուն առաջ ունենալով ամացած են ու կը խոստովանին թէ սխալած էին :

Պատրիարքի այժմու միակ խորհրդականը ու գործակիցը Գաբրիէլ Նորատուկեանն է : մե՛ղք որ դրան էֆէնտիներուն մէջ ամենէն նուազ վտանգուած մարդն էր և իր վրայ մաքուր կարծիք ունեցողները շատ էին :

Պօլսոյ մէջ կը խօսուի թէ կառավարութիւնը դաշնագրութիւն մը կնքած է Գարատաղի հետ, հակառակ Սերպիոյ և Պուլկարիոյ Ծանրագին ընձաներ տրուած են Իշխանին որոնց մասին գրուիլը արդիւրեւ չէ լրագրուներուն :

Ռուսը որ սահմանադրի վրայ եղած երբեմնի ընդհարումներէն կը դժգոհէր, պահանջեր է կառավարութեանէն որ Համիտիէ հեծելագունները ցրուէ : Թուրքը վարանման մէջ էր, երբ յանկարծ լուսեցաւ թէ 250,000 զօրք սահմանադրուիլը կը զրկուի : ասոր վրայ պալատէն հրամաններ զացին որ Համիտիէները ցրուին և պետերը Պօլիս գան :

Սոսյ գործերու մասին այս շաբաթու ալ ձայն չեղաւ : Ե՛րբ պիտի երթայ Սահակ եպիսկոպոս, ի՞նչ պիտի ընէ : ո՛չ ոք գիտէ դեռ : Հայ և թուրք ձերբակալեալներ

րուն վերաբերեալ այնքան շատ գործեր կան որ ստիկանութեան դուռը գոցելու և ստիկանութեան արարքներովը զբաղելու ժամանակ չունի: Քաղաքը բոլորովին անապահովութեան մէջ է և ամէնուն սիրտը ամէն վայրկեան գողի մէջ: Ի՞նչ երջանիկ են արտասահմանի հայերը որոնք այս մտաւոր քնքուր և ոչ մին ունին:

Ա. Թագուորեան, Ն. Թիւրքեան և Գ. Խաչատուրեան բժիշկները ինչպէս նաեւ ուրիշ մի քանիներ արձակուեցան այս շարժում «անհատական» բարեխօսութեամբ և միջամտութեամբ: Այդ անհատական ջանքերն են որ բան մը կարծեն հիմա: Պէտքէրեան այդ միջոցաւ կը բանայ իր վարժարանը և Այվազեան Յովնէփ եւ պիտկոպոս այդ կերպով գնաց իր թեմը: Բարտաւոր են անոնք որ Աշտարակ մը կամ Բարձրագիւղ մը կը ճանչնան:

Մ. Գ. Ու. Կ.

Ուկրա Զօպօրն, 18 Օգոստ.

Ուէսթ Զօպօրնի մէջ, իրարու ետեւէ միմեանց կը յաջորդեն ազգի «ցեցերն ու խաչագողները»: Անցեալ տարի Տօքթ. Թումանյանն էր որ կը խաղար իր խաչերը, իսկ այս տարի անոր յաջորդեց Պ. Ռ. Թորոսեան, որ ուխտած է հայ ազգին վնասելու: Տեղական հայ երիտասարդութիւնը ո՛չ մի ջանք չի խնայեց իր պարտականութիւնը կատարելու և չի խնայեր:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՆՃԱՐԱԿ ԽՍՐԱՎԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Ինչ որ է, թողունք զայդ անցնինք առաջ, աւելին կայ: Հաստատելով կատարուած շարժումին ո՛չ մասնաւորներուն, այլ ընդհանուրիս կողմէն ըլլալը (ի բաց առեալ կարգ մը աւանդական փոփոխութիւնները և Ռուսոստի մեծ-երկրի պէս ծաղիկփիւրն կեղծ կուտքեր), անմիջապէս կը յարենք. հայ հանրութիւնը ընտել պատճառ չունի «յատուկ զիտուսով» դատ մղել Օրմանեանի հետ, որովհետեւ արդէն շատ կանուխէն բացած է զայն թիւրք կայնեան կատարութեան գէտ, եւ զեռ պընդապէս պիտի վարէ մինչեւ իր ազատագրութեան օրը: Ուրեմն, պարոն մարդուկը քաջ գիտնալու էր թէ, մենք Պատրիարքին հետ սա հաշիւը յարգարկ կուզենք միայն: Յայտնի է, Պատրիարքն ինքն է այսօր մեր ազգային իրաւանց երդուեալ աւանդապահը և մեր զատերը վարող պաշտօնական անհատներու աւագագոյնը, ուստի, ամենէն առաջ պէտք է նա կատարէ իր պատասխանատու պարտականութիւնները, որոնցմէ ոչ մին սակայն զոհելով Սուլթանի սիրուն՝ գուցէ անոր սեւ սիրտը շահելու անամէջ սպասումով մը:

Ամբողջ օրերն շարաշար աշխատութեամբ կանցունեն, և իրենց շահած «նուազ» գումարով կուզեն վերականգնեցնել հայ երկեսը մանկաւորն: Ի՞նչ պարոց մը: Քուէարկութեամբ որոշուեցաւ յանձնարու մը. ներկայացուցով հանգանակութեամբ հաւաքեցին մեծ կակ գումար մը, որով տեղական եկեղեցւոյ հողին վրայ պիտի կառուցուէին միջակ շէնք մը, թէ դպրոցի և թէ ազատ լսարանի համար: Սակայն «Աստուածաբան» Պ. Ռ. Թորոսեան, (որ է ազգին ցեցը), հապճեպով դիմեց տեղական ամերիկեան եկեղեցւոյն և անոնք յանձնեցին իրեն սեռեակ մը, որ հայ մանուկներուն դաստիարակեման լիերէն, և կիրակի օրերն ալ «Սէնտի Ոգայլ» տանիլ և քրիստոնէութիւն քարոզել: Այսպէս, անձնական շահուն համար նոր սերունդ մը կը կորսնցունէ: Այդպէս չէ՞, Պ. Թորոսեան. միմիայն շարժական քանի մը տարրաւորներու համար, ձեր պարտաւոր հայ ապագայ սերունդի կործանումովը պիտի հայթայթէ՞ք: Ամօթ ձեզի:

Ճշմարտապէս շատ ուրախ պիտի լինէինք եթէ անոնց անդլիերէն լեզուն վարժեցունէք, բայց և այնպէս ոչ անդլիերէն սորվեցուց և ոչ ալ քրիստոնէայ ըրաւ. անշուշտ «Տիգրիս» և «Հայրենիք» ընթերցողները շատ լաւ կը ճանաչեն մեր յիշեալը, որ տեղական ընդ որ տուները «ժամգոչի» պէս թափառելով, համոզեց տա-

րա դպրոց, «փրնցեալ դպրոց» տալու, ահա իր գործունէութիւնը:

Այս օրերս խեղճ երիտասարդաց (մանուկներուն) մէջ մէկ ձեռք «Կաթ» տուած է սրտերին գրաւելու համար: Միթէ՞ այդչափ խեղճ են անոնց ծնողները, որ կը զիջանին ու ձեռք կը կարկառեն օտարին, մէկ «եւրոպայի» չափ կտորի մը համար: Մենք գիտենք, որ ամէնաշատ շահողը շարժական հինգ օտար կը շահի և այդ բաւ է ամենամեծ ընտանիքի մը: Սակայն այդ չէ պատճառը, այլ իրենց անգիտակցութիւնը, որ իրենք իրենց ձեռքով կը կտորեն օտարներն:

Հայրենակիցներ մի զարմանաք սոյն քանի մը տողերու համար. ի՞նչու համար է որ շարժական 15 սէնթ կը վճարէք ձեր զաւակներուն ո՛ւսմանը. արդէն ձեր աստուածաբան ուսուցիչը, որ կէս ըզրոքական և կէս լրատարական կը համարուի, Ամերիկայի եկեղեցիէն կը վարձատրուի:

Արդեօք կրնա՞ք պարծենալ ձեր զաւակի առած ուսմանըովը. ո՛չ երբէք:

Հայկ Գնունի

Բարիդ, 20 Օգոստոս

Ճամբորդութեան ապաւորութիւններ գրելու յաւակնութիւն չունիմ. թողունք նաեւ Բարիդի հայ գաղութին կեանքը, վիճակը ու կացութիւնը որ նախանձելի չըլլալու վրայ յարգելի ընթերցողներէջ շատեր պազափար ունին:

Գիտեմ որ շատերնիդ լուսացած էք յայտնի դերասան Պ. Փասուլեանի անունը ու շատեր իր ներկայացումները տեսնելու հաժարք վայելած, բայց ձեռք քնքեր կարողացին ու հետաքրքրուեցան անոր արդի գործող կեանքի մասին:

Բարեկամաց ումանց չնորհիւ հայ թերթերու հաւաքածոյի մէջ թաղուած էի, գրութիւն մը աչքիս կը զարնէ Բարիդէն ուղղուած Ամերիկեան Մամուլի Օգոստոս 1 թիւին մէջ. հանրածանօթ գերասանապետ Տիար Փասուլեանի մասին, որուն կը կցէ Մեծ. Տիար Մամուրեան տրամանավայել խմբագրական մը: Անշուշտ գիտնալով գնահատել իսկական արթնալի արժանիքը՝ յարգող կը կարգայ այն ամէն թատերասէր անձանց որ յարկ եղած օգնութիւն հասցնեն ծանօթ հիւանդ արթնալի իր գործունէութիւնը կրկին ձեռք բերելու համար:

Բայց զարմանօք միւսնոյն Կամուր կը արատապուած կը տեսնեմ Ամերիկայի Տիար Օգոստոս ուրախ օրուան թերթին մէջ. բայց գրութեան այն մասը որ արթնալիս Բարիդեան գիւղի մը մէջ նեղիչ օրերուն ամենէն աւելի միջոցաւ պատճառողը պիտի ըլլար՝ զանց անուած է. մինչդեռ անկից առաջ իր արհեստակից Տիգրիս Միւրանոյի մասին նոյն թերթի յուլիս 23 թիւին մէջ գրեթէ երեք ամբողջ սիւնակներ լեցուած են. հանգարտ կերպով կը նկարագրէ անոր գործունէութեան եւ ընդունելութեան վիճակեան վրայ: Մինչդեռ չէ կարելի ուրանալ որ Փասուլեանի մէկ չորրորդ զարէ աւելի առաջ (զիտ երկաթուղիները չի շինուած) երկարատես ասանջալից ճամբորդութեամբ թատրոն չի տեսած, հայ ներկայացումներ չկարգած քաղաքներու մէջ, ոչ միայն Արամեանի նմաններու պէս զեր կատարող այլ խումբեր առած քաղաքէ

անյարմար զիրքին (երկրին), եւ ցանցիւր վիճակին արդիւնքն էր, որ ինչի ըստիկը չունինք: Յաջորդութիւն կը յուսայինք, ձախորդութիւն ինկաւ միզ բաժին, բայց այդ կարծուած ձախորդութիւնն ապահովարար դրաւ ապագայ ազատութեան հաստատ հիմք, ապացուցանելով միանգամայն հայութեան հզօր գոյութիւնը: Վստահ ենք, զեռ տաք արիւն ու մտիւր հոսող Պուլկարիան, Քուպան, Կրէտէն ազատող Սուրբ Յեղափոխութիւնը, չպիտի յապաղի նաեւ փրկել Հայաստանը, հայուն հին փառքին օրրանը: Գիշ մըն ալ համբերութիւն: Հիմա մեզ վայելէ անցած մոռնալ եւ միացածը վառ պահելու ջանալ, որպէսզի վերականգնուեմիս անվրէպ դառնայ: Այս մասին շատ բան կրնայինք ըսել, բայց առ այժմ նիւթէն չի չեղելու համար, միայն նկատել կուտանք պարոն մարդուկին որ, վերջ յիշուած պոռթկումի ստիպիչ պարագաները լաւ յուշ աննելով, այն չըջանը՝ այժմեանին հետ համեմատել անմտութիւն, իսկ այն ժամանակի զէպերը փաստ բռնելով Օրմանեանին ընթացքը արդարացնել ալ աւելի երախտութիւն է. մասնաւոր զի երեք շէնք ստիպել Օրմանեանը, որ չափազանց խիղիւրէ կորովալի իղմիլեանի պէս, որուն գործածը իր աստիճանի անխօսափելի պահանջն էր, այլ կը զայրանանք, տեսնելով իրեն անտանելի ապիկարութիւնը, որով մեր զարեւոր իրաւունքները չկրնալ պաշտպանելէ զատ՝ շատ ան-

Անհունապէս սխալ է այս վատ համոզում: Օրմանեան շատ մը ապարդիւն փորձերէ վերջ՝ լաւ սորվելու էր թէ, Սուլթանը՝ հարաւային հրէջ մարգարէին այդ արիւն կղակ յաջորդը, ինչպէս իրեն գէտ խիզախողներուն սէր շտար, սուր կը ցուցունէ, այնպէս ալ երբէք սիրտ չի տար, սին յոյսեր կը նուիրէ լով իր առջեւ կանացի կերպով շնթող շողմարարներուն: Այս հետեւանօք կը շեշտենք. նոյնիսկ մեր Պատրիարքին քննող քաղաքականութիւնն է, որ կը խաթարէ իր «Տեղականութիւնն ու ազգեցութիւնը, շահեցնելով թշնամիին», եւ ոչ թէ մեր բունած կծու գիրքը, որպէս կամի կըլլեցնել անձարակը. չէ, ընդհակառակը Պատրիարքին հեղինակութիւնը կազդուանայ այն տան, երբ անիկա՝ ոչ առանձին, ինքնազուրկ և խեղճին փչածին պէս, այլ միշտ ժողովուրդին զօրեղ ձայնին անսալով, կենսական խնդիրներու մէջ, անոր միահաւան օժանդակութիւնը կուտան ընելով կը գործէ կտրուկ, բայց հետտես եւ շրջահայեաց գիտակցութեամբ. եւ անհայդ վայրկեանէն շահող մենք, իսկ կորսնցնողը թշնամին կըլլայ այլեւս: Որո՞ւ կը սեւ. այս բաները զգալով մէկտեղ պէտք է եղեր գանգախիլ ըստ մարդուկին. վասն զի, ինչ ընէ եղեր Օրմանեան, երբ նոյնիսկ իր միջոցով եւ Պրիմիալի պատասխան են ամենատարակալ կատարածները: Տեսէ՞ք ապուշ առարկութիւն մըն

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Սկսած մեր 1 է. վարժարանները մեկ են ուսումնական շրջանի մէջ. ամէն ոք արձանագրել է առել իր փոքրիկը, բայց գտնել են և անկարողներ որ չեն կրցել վճարել ամսական թոշակը, ու իրանց զաւակները մնացել են փողոցներին մէջ. նրանցից ոմանք պարսպ թափառում են, իսկ ոմանք զբաղվում են զանազան փոքրիկ առևտուրներով: Սրանք միշտ գլխիկոր են. ուղում են հրճուի բայց չեն կարող. զգում են նրանք որ ետ են մնում իրանց ընկերներից: Ո՞վ է պատճառը, աղքատութիւնը. նրանց հայրերը ունեւոր մարդիկ չեն:

Մանուկները մի առանձին հրճուիքով են գնում վարժարան. նրանք զգում են ուսման քաղցրութիւնը, զգում են որ ապագային լաւ մարդեր լինելու միակ միջոցը վարժարանն է: Բայց այդ կախում ունի իրանց վարժապետներից:

Մեր վարժապետները միմիայն իրանց ապրուստը ճարելու համար պէտք չէ պաշտօնավարեն, այլ պէտք է սրտանց զգան այդ մեծ պաշտօնի պահանջները, և ըստ այնմ առնեն այդ մեծ պատասխանատուութիւնը իրանց վրայ: Նրանք պէտք է սիրեն իրանց աշակերտներին՝ այնպէս ինչպէս հայր մը իր զաւակներին: Մանուկին հետ վարժապետը պէտք է

լինի մանուկ՝ որպէս զի կարողանայ նրա մտքի մէջ սերմանել ուսում և գիտութիւն: Եթէ վարժապետը իր աշակերտի հետ այսպէս է վարվում, նա սիրելի և յարգելի է թէ իրեն և թէ ամէնին:

Վարժարանները արդէն դասարանական գրութեամբ են, և այդ առիթ է օգնում վարժապետներին: Հին ժամանակների պատելիական կամայականութիւնները անգամ են. էլ տղայոց ժամերը դատարկ բաներով պէտք չէ զբաղեցնել. մեր վարժապետները միշտ աչքի առաջ ունենալու են տեղական պուլկար վարժարանների ծրագիրները, որոնք հետեւում են գերմանականին, որպէս զի երբ զաւակները թողնեն ազգային վարժարանը առանց ուէ դժուարութեան կարողանան ընդունել գիմնադրոնի Գ. դասարանը: Առելին պէտք չէ, եթէ մեր վարժարանները պետական երկրորդ կարգի բոլոր պահանջները լիովին գոհացնեն, այդ արդէն ցոյց կը տայ որ վարժարանները կանոնաւոր են: Մենք առելին չենք կարող սպասել, որովհետեւ մինչևեւ ուսումնարանի Բ. կարգը արդէն գնում է կողմ ի կողմ միջակ կրթութիւն առած վարժապետներու շնորհիւ. բայց յետոյ, առելի բարձր կարգերի համար, մեզ պէտք են համալսարանական վարժապետներ, Պուլկարիոյ ո՞ր քաղաքի հայութիւնը կարող է պահել

այդպիսիներին: Թէեւ շատերը խօսում են, թող վիշուժողովրդի աչքերին թէ՛ ունին գիմնադրոնի երրորդ չորրորդ կարգին հաւասար դասարաններ, բայց այդ տեսակ զբառանութիւններէ մենք չենք խաբվում, այլ միայն արգահատում ենք:

Ֆեյդիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Զէյթունէն կարապետ եպիսկոպոս զբեր է Պատրիարքարան որ որբերու թիւը 85ի բարձրացեր է և նպատա խնդրեր է: Նպատակից յանձնաժողովը պատասխանած է որ սու այժմ իրենց միջոցներով կառավարուին:

«Սուրհանդակ» լսած է որ Պատրիարքարանէ նպատա ստացող գաւառային աղքատ վարժարաններու թիւը 27ի իսկ որբանոցներունը 32ի բարձրացեր է:

Այս որբանոցներէն 28ը ուղղակի Պատրիարքարանի նպատակով կը մասակարարուին, իսկ մնացած չորսը բարերարներու նպատակով:

«Ռօպէթ Գօլէճի հայ ուսանողները փափաք յայտնեն են որ ուշիմ և ընդունակ որը տղայ մը որոշուի Պատրիարքարանէ, որպէս զի իրենց պաշտպանութեան ներքեւ ուսում առնէ իրենց վարժարանին մէջ: Այս առաջին անգամը չր որ այդ վարժարանի ուսանողները օգնութեան գործի կը մասնակցին:

«Պօլսոյ թուրք թերթերը կը

քաղաք թատերական ճաշակը տարածելու հոանդեամբ յարգեր է բեմական ճանապարհը եւ ստեղծեր այն ճաշակը՝ որու շնորհիւ վերջը վայելած են իր արհեստակիցները: (տես, կարծեմ, 93ի «Արեւելք» թերթերու մէկուն մէջ կովկասի թերթերէ արտատպուած յօդուածը): Իմ նպատակս չէ ոչ «Եւրոպայի» լիցիւրիցնել եւ ոչ Տ. Սիրանոյշի արժանատուութեան մասին խօսիլ: Տիկին Սիրանոյշ մեծ արթնաց մըն է եւ ունի մեծ արժանիք. Ռուսոյուք: Վանա եւ Ռուսաստան մի քանի քաղաքներու մէջ Փափաղեան Գուկասի անորինութեամբ եղած խմբով տեսանք իր արհեստի վեհութիւնը. անուրանալի ճշմարտութիւն մըն է, մեր ազգին պարծանք բերող զերանառնէի մըն է Տիկին Սիրանոյշ: Բայց միթէ նուազ արթնաց մըն է Պ. Ֆասուլեանն որ Պապանին է. արթնացի մը վայելուչ կերպով նա պէտք ունի ապրելու, մանաւանդ հիմա որ հիւանդութեան պատճառով տարի է մը ի վեր գործէ քաշուելով քաղաքէ քաղաք կը պտտի, առողջութիւնը վերստանալու կը ճգնի, ինչպէս երբեմն կը ճգնէր թատրոններ հաստատել, աշակերտներ հասցնել որոնց արդիւնքն է այսօրուան հիւանդութիւնը: Ինչպէ՞ս կարելի է յուսալ լաւ ապրիլ, երբ առանց օգնութեան անապրեր աչքով հեռուէն դիտող ըլլանք, եւ իր արհեստակիցները չհասեւին այն օրինակին որ այսօր Ռուսոյուքի մէջ գերաստանական «Վեսելո» խումբը (ստացած նամակիս նայելով) կը պատրաստուի, ի նպատակ վարպետին ներկայացում մը տալ, Միթէ սիրելի չէ՞ յուսալ որ նոյն բանը ընէն շտա մը քաղաքներ, իր հետ ճամբորդող տաք պողմիսին անցնող Տիկին Սիրանոյշն ալ այսօրուան կեանքին մէջ իբր հին ընկերակցութեան պարտաւորութիւն մը, նոյնպէս եւ Պ. Մանուկան:

Իրնրան Արգարան

զամ ինքնիր ձեռքով ալ զեղծեց զանանք: Միթէ ամօթ եւ նախատինք չէր իրեն, թոյլատրեց բեկանել կիւրիկիս օրինաւոր ընտրութիւնը, զոր կրակի մէջ կատարած էր երկաթէ Պատրիարքը: Ինչո՞ւ վախցաւ եւ չաշխատեցաւ վաւերացնել նաեւ այս վերջնայ Յիզպտոսի առաջնորդութիւնը, որ ըստ կանոնի քուէարկուած էր: Յայտնի է, առանց երկուքն ալ, մանաւանդ առաջինը, իր դեւական փառամտութեան (կիւրիկիս եւ Պօլսոյ միացեալ ախտոսին) յազեցման համար էր, որուն անդամնալի զոհն եղաւ արթուն հայրենասէր քոյրիկը՝ ողբային Ալլաթմանն: Հապա ազգին առանձնաշնորհումները սրբազործող Սահմանադրութեան ղէմ՝ քննութեան քողին տակ ընել սուռած պիղծ բռնաբարումը. ո՞ր մէկը թուենք. այնքան վեասներ հասցնելով հանդերձ, գոնէ բանասարկելոց ամբողջական ներում մըն ալ չստացաւ, գոնէ չապահովեց նաեւ անհրաժեշտ վերադարձը տասնակ հազարներով գաղթականներու, որոնք Ռուս-թիւրք սահմանադրութիւն վրայ զիջուած ի զուր կսպասեն աւետոր օգնութիւնը. ամիս մը անցնելէն վերջն ալ խերք տես, անտնցմէ շատերը վերանաւ ձմրան կուր ու կերակուր պիտի ըլլան շնորհիւ երկչոտ Օրմանեանին: Ասո՞նք են սնկատակիք խնդիրները: Պարոն մարգրուկ, երեսի վրայ ձգուած բոլոր այս գործերն անտես առնել եւ դարձեալ անձաճօրէն պողալ թէ՛ «Ի՞նչ ընէ կղեր Օրմանեան» . է՛ն, ան ալ այն-

չափ աղքատներ կամօքէ, դպրոցներ, որբանոցներ կը բանայ եւն. եւ այլն: Ի՞նչ դժուար բան: Գարտապարտ պարզ գործակալութիւնը թըքասէր Բարթոլոմէոսն ալ կրնայ ընել կարծեմ:

Ալ հերթք. ձեզ նման հակասական հրապարակադրներու գորտային կոկոնցը մտիկ ընելով գլուխիս ցաւեցաւ: Գործը գործէն անցնելու վրայ է: Քանի որ Պատրիարքը խուռ ու անտարբեր կը մնայ շուրջ կուտակուած զգոհութեան ղէմ, քանի որ նա սովորական քմծածաղն երեսին չլինի իր պարտադրութեան հանդիսանալէ եւ կը շարունակէ իր կործանատար ուղին. ուրեմն, մենք ալ պարտինք ա ելի բուռն եղանակաբարոյապէս պատժել զինքը. դատասիտել իր պատրիարքական ամուլ գործառնութիւնը (\*) ըլլայ հրապար-

(\*) Արդարութիւնը կը պարտաւորէ զիս սոյն ծանօթութեամբ աւելցնել թէ, Օրմանեանի Պատրիարքական կեանքը խաբու քննադատելու ամէն աղատութիւն կրնանք ունենալ, սակայն անկէ անդին անոր անցեալ գործունէութեան եւ մանաւանդ ներքին, անհատական եւ բարոյական կեանքին վրայ լքաի զբարատութիւններ յերկրել՝ անխղճութեանց էն ստորնագոյնն է. ինչպէս վերջերս բրած էր «Անահիտ» (թիւ 9-10) գարնավերջիկ դատարկարանը՝ Զ.ն: Ամէցէք պարոն, անձը գործէն դատելու չափ ալ ապիկար էք: Ես զինքը շտա մօտէն սերտած ըլլա-

րակի եւ ըլլայ եկեղեցիի մէջ. զէ օրինաւոր բողոքը (որպէս մերինը) երկրի վրայ որոշ առեան եւ ունեւորող առեանակալ չունի. ուստի, եթէ կարելի ըլլար, զայն եկեղեցիէն վերձ Աստուծոյ առջեւ ալ բարձրացնելով յուզելու ամէն իրաւունքն ունէինք, նախ՝ Երազդի մարդակերին սասակապէս հասցնելու թէ, իր սիրեցեալ պատրիարքը խաբարելով՝ գործ չլինար, մեզի գոհացում պէտք էր. եւ յետոյ, Օրմանեանին առելի խիստ զգացնել որ, ալ բաւ է մեր քթին խնդացածը, երկու կարճ ճամբայ ունի, անմիջական սթափում կամ հրաժարում: Ըստ մեզ, սասջին կէտին ղէմն անցած է, իսկ երկրորդը շտապեցնել տալու ամէն միջոց զբանելն ու գործադրելը՝ արտասահմանի մամուլին, հայութեան եւ մանաւանդ երկասարգութեան անհրաժեշտ պարտքն է, հոգ չէ թէ, Մարսիլիոյ խանութպանը, այդ տեսակ փորձ ընողներս «տիրացու յեղափոխականներ կը կոչէ. ի՞նչ ալ աղուոր արամարանութիւն: Երանի այդ տեսակ աղբարներուն, որոնք զիտ չեն ըմբռնած թէ, յեղափոխութիւնը

լով, առանց նկատումի կը յայտարարեմ թէ, նա նշանաւոր իր անբասիր բարոյականովը եւ անյուսալի խստահարօնութեամբը. հակառակ հասանել կազմին, ուսելիքի մէջ վերջին ծայր ժուծկալ, իսկ ունէ ողբից ըմպիլիք բնաւ չգործածէր եւ գործածողներէն ալ չափազանց կը խորշի: Գրուայր

միայն այն ատեն տիրացուական եղած կըլլար, երբ իրենց պէս ազգին ղէմ եղած զեղծումներուն մասին անհոգ ու անզգայ մնար. արգահատանք այդպիսեաց: Մենք առաջ երթանք, եւ եթէ կրնաւք Օրմանեանին անուր եկեղեցիէն եւ անձը Պատրիարքարանէն արտաքսելէն վերջ, երբ յարմար ժամանակը հասնի, բնաւ չխղճահարենք նաեւ դուրս քշելու ո՞չ «Ս. Վարդանի» (զի, ի սէր պատմական անաչառ ստուգարանութեան, անոր առած քայլը միայն կրնայ քննադատուիլ, իսկ հիւանալի անձնուիրութիւնը ամէն առարկութիւնէ վեր եւ յաւէս պաշտելի է.) այլ կարգ մը օտար Ոնոփրոս, Պոզիկարպոս, Կոզմոզ եւ Գամիանոսներ, որոնց սեղ կը սիրէինք տօնել «նոր գոհուած» հերոս վարդաններ ու Ղեւոնդներ: Ալ նախապաշարումի դարը հեռացած է, լոյսի եւ ազատամտութեան փարինք. առանց Պատրիարքարանի հետ եղած «յարաբերութեան խզումի» սպառնալիքին ակնաջ կախելու: Ենթադրենք թէ, առժամակաւ ատենի բան մը պատահեր. անկէ սպասած շահերնիս ի՞նչ էր, որ կորուսածնիս ի՞նչ ըլլար. ընդհակառակը այդ ընթացքով Օրմանեանի անկումը պիտի փութացնէինք. յաջողին հետ յարաբերութիւննիս առելի սերտ կապելու յուսով:

Ս. ԳՈՒԱՅՐ

Փօքջան

գրեն թէ Հաճընի 200 տուն հրը- կիզեալները քաղաքին մէջ այլ և այլ տեղեր պարսպաբեր են և ասոնցմէ ամէնէն աւելի չքաւոր 300ի չափ անձերու համար նպաստ հաւաքուիլ սկսեցին ։ Բայց հաւաքուած գումարը հաշիւ ապրուստի կը բաւէ ։

— Նիկոպոլիսէն Պ. Յ. Գամպէրեան, կառավարիչ Օրմանեանի փոխարէն եկեղեցւոյն մէջ յիշելու համար սկսեցին անունը ։

— Մոսկովայի հայոց եկեղեցւոյն մէջ Օգոստոս 22ին Գամառ Գաթիկայի յիշատակին հոգեհանգիստ կատարուեց է անմահ բանաստեղծին մահուան եօթներորդ տարեգարձին առթիւ ։

— Տօքթ. Լեպսիուս «Մշակ»-ի մէջ գրած հակախօսական նամակի մը մէջ կը յայտարարէ թէ՛ ինքը և իր բարեկամները պաշտպաններ են հայ ազգի պատիւը եւրոպական հայտնաց մամուլին դէմ ։ 2,000,000 մարք հաւաքած են յօգուտ հայ կարօտեալներու և մինչեւ այսօր ալ 2000 հայ որբեր գերմանական ծախքով կը խնամուին ։

— Ստացանք Պ. Պերճի «Ներշնչումներ ազգային և յեղափոխական արդի կեանքի» գրքոյկը ։ Տպագրուած Գահիրէ ։ Կարգաւ վերջ կը գրենք գրքոյկի մասին ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի սեւամորթները, քառորդ դարի փորձէ մը վերջ՝ եկած են այն համոզման սր, այլևս անկարող են ապրիլ եւրոպացի ամերիկացիներու հետ ։ այս պատճառաւ աղերսագիր մը պատրաստած են Ամերիկեան գօնկրէին տալու որպէսզի թոյլ տրուի գաղթել Ամերիկէ անկախ պետութիւն մը հիմնելու կամ թէ ուրիշ աւելի հիւրասէր երկիր մը գտնալու ։

— Քանի մը օրէ ի վեր նախարարները թէ ելլալու մէջ և թէ Բ. Գուրբ ժողովներ կընեն, որոնց երբեմն կը մասնակցին նաեւ հին նախարարները ։ Քանի մը թուրք ղեկավարներուն մայրաքաղաքին մէջ զանուիլն ալ կարծես առանձին նշանակութիւն մը կուտայ նախարարական այս ժողովներուն ։ կը խօսուէր նախարարութեան փոփոխման մասին, որուն պիտի հետեւէր և օտար երկիրներու մէջ գտնուած թիւրք տիրութեան մեջ գտնուած թիւրք տիրութեան կը պատճառէ ելլալու ։

Այս անգամ կաշխատին գործնական միջոց մը գտնալ նրոպիոյ մէջ գտնուած բոլոր երիտասարդ

թիւրքերը թուրքիա վերադարձնելու ։

— Կրտսէի թէ Չարը պատուիրեր է, Ռուսիոյ հաշուին բուժարան մը հիմնել Գանտիոյ մէջ ։ Այդ բուժարանէն ձրի դեղ և բժշկական օգնութիւններ պիտի տրուին չքաւոր կրտսէիներուն առանց կրօնքի խտրութեան ։

— Քանտիային կը հաղորդեն թէ երկիրս իշխանը ի պատասխան կրտսէն հովանաւորող չորս պետութիւններու բարեկամական խորհուրդներուն յայտարարած է թէ՛ կրտսէական կառավարութիւնը պատրաստ է տալու իր բաժինը Օսմանեան հանրային պարտուց՝ այն պայմաններու համաձայն, որ պիտի կարգադրեն կրտսէի երեւոյց նախարարը և Օսմանեան հանրային պարտուց նախագահը ։ Այս յայտարարութենէն յետոյ Գանտիա կսպասուի թուրքիոյ հանրային պարտուց վարչութեան նախագահ Մ. Լեփի ։

— Քուպայի ապստամբներուն զէնքերը թիւնը բոլորովին ապահովելու համար, դրամ առաջարկուած էր զէնքը ամերիկացիներուն յանձնողներուն ։

Նոյն օրինակին հետեւելով՝ ժէնէրալ Օտիս յայտարարած է թէ զէնքերը Ամերիկացիներուն յանձնող և Ամերիկեան իշխանութիւնը ընդունող ամէն մէկ ֆիլիպինցի 15 ասլար նուէր պիտի ստանայ ։

Այս յայտարարութիւններէն հազարներով ցրուած են այն վայրերու մէջ ուր կը գտնուին ըմբոս ֆիլիպինցիները ։ Սակայն մեծ յաջողութիւն մը չէ ունեցած ժէնէրալ Օտիս ։ Երկու ամսուան մէջ միայն 15 ֆիլիպինցիներ օգտուած են ամերիկեան ժէնէրալի առաջարկէն ։

— Ամերիկա, Գերմանիա, Անգլիա առաջարկներ եղած են որ անմեղ Տրէյֆիսը պատժող թրանսպի 1900ի ցուցահանդէսին չը մասնակցին այդ պետութիւնները ։

Ամերիկայի մէջ տեղ մը ֆրանսական դրօշակը պատուեր են ։ գործարանի մը մէջ ֆրանսացի բանորները վաճառք են, և ուրիշ տեղեր շատ մը արհամարհանքի ցոյցեր քրած են ։

— Հռչակատու Զօր նորէն ասպարէզ եկաւ «Օրօր» թերթին մէջ յօդուածով մը ։ «Հինգերորդ գործողութիւն» վերնագրով, աւելարդ չենք համարիր մեր ընթերցողները ծանօթացնել այդ նշանաւոր նամակին կարեւոր կէտերուն հետ ։

«Ամբողջ աշխարհը համալուծած է Տրէյֆիսի անմեղութեանը մէջ և թրանսպի որ կը պատրաստուի սօնելու իր աշխատութեան, զիտութեան, ազատութեան, ճշմարտութեան և արդարութեան համար մղած կռիւի դարը, ժամագրութիւն տուած է բոլոր աղ-

գերուն փառաբանելու իր յաղթութիւնը ։

Եւ երբ, քանի մը ամսէ վերջ, աղգերը դանձ պիտի գտնան երկու անգամ պատժուած անմեղ մը, ճշմարտութիւնը ապտակուած, արդարութիւնը սպաննուած ։

Եթէ կառավարութիւնը կընկըրկի՝ ճշմարտութեան և արդարութեան պաշտպանները կընեն ինչ որ պէտք է ։ Մեզմէ ոչ մին չը լքէր իր տեղը ։ Փաստ, անյաղթելի փաստ, մենք կը վերջացնենք զայն ունենալով ։

Նոյեմբեր 23ին մենք Վէրսալ պիտի ըլլանք ։ Իմ գաղափարութիւնս պիտի վերսկսի, որովհետեւ կան մարդիկ որ կուզեն այն սկստի լիովին ։ Եթէ մինչեւ այսօր արդարութիւնը կատարուել չէ, մենք կը ջանանք որ ըլլայ ։ Իմ սիրելի, իմ արթուն Լապորիս, որու փառքը աւելի մեծցաւ՝ Վէրսալի մէջ պիտի արասանէ այն ճառը որ չը կրցաւ Տրէյֆիսի գառի ժամանակ ։ Այնչ, կորուստ չունինք ։ Ես լուեցնել չի պիտի տամ զանի, ան ճշմարտութիւնը պիտի ըսէ ։ առանց վախճալու, առանց զիս ուրանալու ։ որովհետեւ ես պատրաստ եմ զոհելու թէ իմ ազատութիւնս և թէ արիւնս ։ Սէնի զատարանի առջեւ ես երկուսը ըրի Տրէյֆիսի անմեղութեանը համար ։ այսօր կերպնում ամբողջ աշխարհի առջեւ որ ինձի հետ միասին նոյնը կալաղակէ ։

— Իւսրիւպի Պուլկար մեթրօպոլիտը հեռագրով իր հրաժարականը տուած է Պօլսոյ Էջրաքին ։

— Պուլկարիոյ գործակալ Պ. Կեչուֆ անցեալ շաբթու մէջ քանի մը անգամ անսակցեր է մեծ վէշիլին հետ ։

— Պօլսէն եկած վերջին լուրերուն նայելով՝ Պուլկարիոյ և Սերպիոյ գործակատարները նօթա մը տուած են ստարաղամին Քուսանովայի զէպքերուն առթիւ ։

— «Երիտասարդ թուրքերու» զօմիթէն հետեւեալը կը յայտարարէ ։

Ահմէտ ձէլալէտտին փաշայի ըրած ճամբորդութեան առթիւ լրագիրները հաղորդեցին թէ, փաշան մեծ խոտուածներ ընելով և մեծ կաշառներ տալով յաջողք է շատ մը երիտասարդ թուրքեր Պօլիս վերադարձնել ։

«Մեր զօմիթէն կը յայտարարէ որ փաշայի տարած մարդիկը երիտասարդ թուրքերէն չեն, այլ սովորական ճամբորդներ ։ Խոտի այդ մարդոց Պօլիս վերադառնալը զօմիթէն ամբողջութեան վնաս մը չի հասցնէր որու միակ սկզբունքն է մինչեւ վերջը սանիլ ազատութեան և արդարութեան համար սկսած կռիւը ։ Մեր զօմիթէն զիմադրած է և սյուս հետեւ ալ պիտի զիմադրէ ամէն տեսակ անբարոյականութեան ։

ՅԵՏԱԶԳՈՒ ԵՒ Է

Տիար Գալէմեանի տալիք թատերական ներկայացումը օդին պատճառաւ՝ որ տեղի պիտի ունենայ այս գիշեր ։

Ա. Զ. Դ

Մինաս Բարսեղեան, Ակնայ գիւղերէն, Հապուճէիցի, տարիքը 30, արհեստով տապալաւոր, երկայնահասակ և թուխ գէմբով, Ռուսանիոյ կամ Պուլկարիոյ մէջ ըլլալ կը կարծուի ։ Հասցէն տեղեկութիւն ունեցողը թող հաղորդէ խմբագրութեանս ։

ԸՆԴՍՐԱՅԻ ԵՐԿՐԱՐԱՅ  
ՀԱՅԿԱՅԻՆ ԿՍՄ ՀԱՄԱՅ ԱՆՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի ։ Վասն Ա. Զարգանէի ներքին գրաստանը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարգանքի եւ վիպական գրքեր ։ դրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրով ։ Կնոսմ եւ վաճառու ամէն տեսակ գործածուած նամակագրոյն երու ։

Ա. Զ. Դ

Տպարչի աղջկանց վարժարանին համար կուզուի վարժուէի մը սր կարողանայ աւանդել հայերէն լեզուի հետ և երկրորդական ուսումներ ու ձեռագործ՝ գոհացուցիչ ամսականով ։ Փակագրոյնը զիմե հոգաբարձութեան նամակով ։

Арменско училищно настоятелство  
гр. Дюбрович

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»-Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորներ, հասցէտուներ, նամակագրութիւն, հարսանեական հրատարակիչ, մահազգ, ինչպէս նաեւ պրօշուրներ ։

Գիտերը յոյժ գիւրամատչելի ։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին ։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Ս. ԽՕՐԱՍԱՆՁԵԱՆ  
ԿՕՇԿԱԿԱՐ

Մուսալա, քաղնիք վոյոց, Հաճի Հասանի օրէնի տակ ։

Ճաշակաւոր, տիկուն և ձեռքեր կօշիկ շինել ալ ուղղորդ պէտք է զիմէ Պ. Սակփան Խօրասանեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով ձրիւան կեւայ ։

Գիտերը իրաւ գիւրամատչելի ։

ԿՈՒՋԻՎ ՀԱՐՍՏԱՆՍԸ

Գիտերը ։

Մ. Թիւթիւնեան եւ ընկ  
ի Ռուսուք

Ուր ըստ ստանդոնի կը վաճառեն Սօֆիա քաղաքի Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ստանակները ։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին ։